# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ԱՅՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ԱՅՐՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
ՀԵՌ. 093351130

22 – ը հոկտեմբերի 2015 թ. գ. Այրք

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 21

## ԱՅՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.01.2015 Թ. « ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԹԻՎ 02 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 26 – րդ մասի , 32 – րդ հոդվածի 5 – րդ մասի և « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70 – րդ հոդվածի 5 – րդ և 6 – րդ մասերի դրույթներով համայնքի ավագանին

որոշում է`

1.Այրք համայնքի ավագանու 12.01.2015 թվականի « ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » թիվ 02 - Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ` որոշման մեջ կատարելով համապատասխան փոփոխություններ :

2.Հաստատել Այրք համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

| թթ | Պաշտոնների անվանացանկը | Հաստիքային միավորը | պաշտոնային դրույքաչափերը |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 250000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 200000 |
| 3 | Համակարգչային օպերատոր | 1 | 86000 |
| 4 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 200000 |
| 5 | Առաջատար մասնագետ | 1 | 150000 |
| 6 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 90000 |
| 7 | Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 86000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 7 | 1062000 |

3.Հանձնարարել Այրք համայնքի ղեկավարին `Այրքի գյուղապետարանի Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ սեղմ ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին :

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՇԱԲՈՅԱՆ